Պարույր Սևակ

Իսկ ինչ անենք

Ես տեսնում եմ՝ չես հավատում ո՛չ իմ, ո՛չ քո անցյալին.
Մեր հարուստը՝ աչքիդ աղքատ, կեղծ է թվում պանծալին:
Դու կարծում ես, որ ամե՛ն ինչ, ո՛ղջը սուտ էր մեր միջև,
Ճիշտ էր միայն երկար ճամփան՝ լիքը փշեր ու խճեր:
Ճիշտ էր միայն սպասումը, որ և անցավ ապարդյուն -
Իզո՛ւր էին մեր սրտերը սպասումից թպրտում:
Ճիշտ էր միայն արբեցումը այն սին բախտով, որ եկավ,-
Նա ոսկի չէր, այլ ոսկեզօծ, հետո՝ պղինձ, վերջը՝ կավ...
Ես տեսնում եմ՝ չես հավատում դու անցյալին իմ ու քո,
Չես հավատում ու չես տարվում նաև դու մեր գալիքով:
Չես հավատում, թե նա կգա, թե կլինենք բախտավոր,-
Քեզ ամե՛ն ինչ փուչ է թվում և ամեն ինչ՝ ախտավոր:
Քեզ թվում է, որ մենք իզո՛ւր հանդիպեցինք մեկմեկու,-
Ո՛չ մեր սրտում՝ երջանկություն, ո՛չ մեր կյանքում՝ մեծ բեկում...
Իսկ ի՞նչ անենք, ո՞նց բաժանվենք, երբ սրտերը իմ ու քո
Թե սիրով էլ չեն շղթայված, գեթ կապված են տանջանքով...

26.X.1955թ.
Մոսկվա